

ՅԵ 346, ԷԼԲ. 461

1. Գեղեցիկ ամէն տուներ,
Երբ սէր կայ տան մէջ,
Զուարթ, սիրուն ամէն դէմքեր,
Երբ սէր կայ տան մէջ:
Հոն կայ քաղցր միութիւն,
Ծնւարիտ խաղաղութիւն,
Իսկական հաջողութիւն,
Երբ սէր կայ տան մէջ:
Սէր տան մէջ, սէր տան մէջ,
Իսկական հաջողութիւն,
Երբ սէր կայ տան մէջ:

2. Պարզ խրճիթն է հրճուալից,
Երբ սէր կայ տան մէջ,
Զերծ վնասէն հոռի կըրից,
Երբ սէր կայ տան մէջ:
Հոտաւէտ ծաղիկներով
Տէս, երկիր դրախտի պէս զով,
Կեանք՝ անդորր ու ապահով,
Երբ սէր կայ տան մէջ:
Սէր տան մէջ, սէր տան մէջ,
Կեանք՝ անդորր ու ապահով,
Երբ սէր կայ տան մէջ:

3. Վերն երկինք կը ծիծաղի,
Երբ սէր կայ տան մէջ,
Վարն երկիր սիրով է լի,
Երբ սէր կայ տան մէջ:
Զով ջուրերն, անոյշ երգերն,
Եվ ճաճանչագեղ երթերն

Տէրն ալ կը հաւնի բարձրէն,
Երբ սէր կայ տան մէջ:

Սէր տան մէջ, սէր տան մէջ,
Տէրն ալ կը հաւնի բարձրէն,
Երբ սէր կայ տան մէջ: